*միայն բարձր։ Աջակողմի պատուհանի տանիքէն, որմախառն շեղ սանդուխ մը կ'ելնուի եկեղեցւոյ առաստաղն ու տանիքը, ինչպէս նաեւ վերնայարկի երկու սեղանները և զանգակատունը։*

*Ամբողջ ներսը, պատեր եւ ձեղուն, պարզ իւղաներկ են. մարմարեան սալարկուած են բեմը, դասը և գաւիթին միջնամասը։*

*Դասը, որուն աջակողմի գլուխը կայ Առաջնորդական Աթոռին ամպհովանին, առանձին բարձր է և անկէ կ'անջատուի փայտեայ բազրիքով մը. իսկ գաւիթը առանձին կ'անջատուի դասէն մինչև ձեղունը երկաթեայ վանդակապատով մը, որ 1914-ին շինուած է Տիգրան Արթինօֆի ծախքով։(*)*




(թիւ 22) Արձանագրութիւն ելեկտրական լուսաւորութեան

---

(*) Մետաղեայ տախտակի մը վրայ կայ եւս արձանագրութիւնը.

Յիշատակ է
վանդակս այս երկաթեայ
Տիար Տիգրան Արթինօֆի
համայն ննջեցելոց 1914 Յունվ. 4